

## Արձանագրություն N 5/146

### ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ-ի հուլիսի 2 -ի նիստի

#### Օրակարգ

1. 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ.՝ պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Կուրատորական աշխատանքների հաշվետվության հարցը /զեկ.՝ Գ.Բալասանյան/:
3. Դոցենտ Ա. Ալեքսանյանին թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման համար թույլատրության հարցը:
4. Դոցենտի թափուր պաշտոնների համար մրցույթի անցկացում / զեկ.՝ դոց. Խ.Գալստյան/:
5. Ընթացիկ հարցեր:

#### Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կուրատորական աշխատանքները:
2. Երաշխավորել տպագրության հետևյալ աշխատանքը.  
Հանրային կառավարման ամբիոնի դասախոս Վաչե Քալաշյանի “Քաղաքացիական ծառայության ամբողջականության սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում” մեթոդական ձեռնարկը:
3. Հենվելով ք.գ.թ., դոցենտ Ա. Ալեքսանյանի երկարատև գիտական գործունեության արդյունքների, նրա կողմից հրատարակված 30-ից ավելի գիտական աշխատությունների առկայության փաստի վրա՝ երաշխավորել թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման թույլտվություն ստանալու համար ԻԳ.00.01 “Քաղաքական գիտության պատմություն և տեսություն” մասնագիտությամբ և դիմել ԵՊՀ պրոռեկտոր, պրն. Գ.Գևորգյանին համապատասխան միջնորդություն ներկայացնելու ՀՀ ԲՈՀ:
4. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի պաշտոնի համար պ.գ.թ., դոցենտ Ժ. Մանուկյանի, դոցենտ Աշոտ Կարապետյանի, դոցենտ Վահրամ Պետրոսյանի, դոցենտ Գրիգոր Բալասանյանի, Անահիտ Աբրահամյանի, Արթուր Իսրայելյանի, Ամալյա Բաբայանի, Վարդուհի Պետրոսյանի անունները:  
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի

հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 15-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Մանուկյան Ժակ – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Կարապետյան Աշոտ – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Պետրոսյան Վահրամ – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Բալասանյան Գրիգոր – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Իսրայելյան Արթուր – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Բաբայան Ամալյա – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Պետրոսյան Վարդուհի – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Աբրահամյան Անահիտ – 15 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

*Գիտական խորհրդի նախագահ, պրոֆ.*

*Գ. Պետրոսյան*

*Գիտական խորհրդի քարտուղար, դոց.*

*Խ. Գալստյան*